



## Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

### Կարճ գրություն 4

Հունվար 2011

#### Պետական գնումներ

# Ո՞ր պայմանագրերն են ընդգրկված Պետական Գնումների մասին Հրահանգներում:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ընդհանուր համատեքստ. Պայմանագրերի տեսակները, ընդհանուր հատկանիշները
- Աշխատանքների կատարումն ընդդեմ մատակարարման ընդդեմ ծառայությունների մատուցման պայմանագրերի
- Պայմանագրերի դասակարգումը
- Բացառություններ



[www.sigmaweb.org](http://www.sigmaweb.org)

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Հրահանգներն ընդգրկում են պայմանագրերի երեք հիմնական տեսակ. աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, ներառյալ՝ նախագծման աշխատանքները:

Որոշ պայմանագրեր հաճախ պարունակում են վերը նշված պայմանագրի ձևերից մեկ կամ մի քանի տարրեր: Այսպես, շինության կառուցման պայմանագիրը կարող է ընդգրկել նախագծման աշխատանքներ և որոշակի անհրաժեշտ ապրանքների մատակարարում: Նմանապես, ապրանքների մատակարարման պայմանագիրը կարող է ներառել տեղակայման և տեղադրման ծառայություններ: Հրահանգը պարունակում է հատուկ կանոններ, որոնք օգտագործվում են այս “խառը պայմանագրերը” դասակարգելու համար:

Մի շարք պայմանագրերի վրա ընդհանրապես չեն տարածվում Հրահանգի պահանջները (բայց ոչ անհրաժեշտաբար Պայմանագրի) կա՛մ իրենց բնույթի պատճառով, քանի որ պատշաճ չէր լինի կիրառել Հրահանգի դրույթները, կա՛մ այն պատճառով, որ նրանք ենթակա են կարգավորման կամ դեկլարման՝ այլ համակարգերի կողմից: Որոշ պայմանագրեր, նոր “պահուստային պայմանագրերը”, հատուկ վերաբերմունքի են արժանանում դրանց շրջանակում ապրանքներ մատակարարողների, աշխատանքներ կատարողների կամ ծառայություններ մատուցողների անձի պատճառով:

Նույնիսկ այն պայմանագրերը, որոնց վրա տարածվում են Հրահանգի պահանջները, կարգավորվում են դրանցով, եթե պայմանագրի արժեքը գերազանցում է Հրահանգներում սահմանված համապատասխան դրամական արժեքը՝ ԵՄ ֆինանսական շեմը: Այս շեմը արտացոլում է այն մակարդակը, որի դեպքում Համայնքային Օրենսդրի կողմից ենթադրվում է, որ միջսահմանային առևտուրը հավանական է (չնայած հնարավոր է, որ կախված հանգամանքներից, մասնակիցները հետաքրքրված լինեն ԵՄ այլ անդամ երկրներում շեմից ցածր պայմանագրերում. պետք է հիշել, որ ցանկացած դեպքում ընդհանուր սկզբունքները կիրառվում են այս պայմանագրերի շնորհման նկատմամբ): Ծնորհվելիք պայմանագրերի գինը հաշվելու արհեստական մեթոդները կանխելու համար Հրահանգները նաև նախատեսում են հաշվարկման կանոններ և մեթոդներ, ինչպես նաև արգելում են այն մեթոդները, որոնք նախատեսված են Հրահանգները շրջանցելու համար՝ պայմանագրերն այնպես բաժանելով, միավորելով կամ կազմելով, որ դրանք պատշաճ կերպով չեն համապատասխանում տվյալ դրույթներին: Այս խնդրի քննարկման համար տե՛ս *Պետական Գնումների մասին կարճ գրություն 5. ԵՄ ֆինանսական շեմերի ընկալումը*:

Մեկ շատ կարևոր տարբերակում, որն արվել է Հրահանգում, տարբերակումն է “պայմանագրերի” և “կոնցեսիաների” միջև, երբ վերջիններին վերաբերում են այլ կերպ, քան պայմանագրերին: Հատուկ կանոնները կիրառվում են աշխատանքների կոնցեսիայի շնորհման նկատմամբ Հանրային Ոլորտի Հրահանգում, այնինչ ծառայությունների մատուցման կոնցեսիաների վրա չեն տարածվում ինչպես Հանրային Ոլորտի Հրահանգի, այնպես էլ Կոմունալ Ծառայությունների Մատուցման Հրահանգի պահանջները:

**Ընդհանուր հատկանիշներ.** Կան մի քանի ընդհանուր հատկանիշներ, որոնք ընդհանուր են Հրահանգում նախատեսված բոլոր ձևերի պայմանագրերի համար.

Հրահանգը կիրառվում է ֆինանսական շահ հետապնդող պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվում են գրավոր, մասնակցի և պետական պատվիրատուի միջև, հետևյալ կերպ.

- **Պայմանագիրը պետք է ֆինանսական շահ հետապնդի**, այսինքն՝ դրամ կամ դրամական արժեք: Պետք է լինի ֆինանսական փոխհատուցում, անկախ նրանից, թե ինչպես է այն վճարվում:
- **Պայմանագիրը պետք է լինի գրավոր**: Բացառիկ դեպքերում, երբ պայմանագիրը, որը համապատասխանում է Հրահանգին, գրավոր չէ, ենթակա է կարգավորման Պայմանագրում պարունակվող ընդհանուր կանոններով:
- **Պայմանագիրը պետք է լինի երկկողմ.** մասնակից և պետական պատվիրատու:

### **Ե՞րբ է առաջանում պայմանագիրը:**

Երբ շնորհվում է նոր պայմանագիր, այն նույնականացնելը հիմնականում մեծ դժվարություն չի ներկայացնում: Այնուամենայնիվ, երբեմն այն բացահայտ չէ: Օրինակ, գոյություն ունեցող պայմանագիրը կարող է փոփոխվել կամ նորացվել: Պայմանագիրը կարող է փոփոխվել նաև դրա գործողության ընթացքում: Այս բոլոր իրավիճակներն առաջացնում են նոր պարտավորություններ կողմերի միջև և կարող են փոխել սկզբնական պայմանագրերի պայմանները:

Եթե փոփոխությունների արդյունքն այնքան զգալի է, որ նորացված կամ փոփոխված պայմանագիրը հիմնովին տարբերվում է սկզբնական պայմանագրից, ապա հնարավոր է, որ ստեղծվել է նոր պայմանագիր: Եթե կա նոր պայմանագիր և առկա են պայմանագրի բոլոր տարրերը, պայմանագիրը պետք է կնքվի գնումների վերաբերյալ կանոններին համապատասխան, այսինքն՝ այն պետք է շնորհվի Հրահանգի դրույթների համաձայն: Սա նշանակում է, որ հասարակ երկարաձգումը, նորացումը կամ նույնիսկ փոփոխումը չեն կարող թույլատրվել, եթե դա արվում է առանց մրցույթի:

### **Որո՞նք են աշխատանքների կատարման պայմանագրերը:**

Աշխատանքների կատարման պայմանագրերը նրանք, են, որոնք.

- որպես նպատակ ունեն այնպիսի աշխատանքների իրականացումը կամ նախագծումը և իրականացումը, որոնք կապված են Հանրային Ոլորտի Հրահանգի Հավելված I-ում նշված գործողություններից որևէ մեկի հետ (Կոմունալ Ծառայությունների Մատուցման Հրահանգի Հավելված XII), կամ
- որպես նպատակ ունեն ցանկացած ձևով աշխատանքների իրականացումը, որոնք համապատասխանում են պետական պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին:

Նախագծման աշխատանքները աշխատանքների կատարման պայմանագրերում ընդգրկվելու հնարավորությունը նշանակում է, որ “նախագծման և կառուցման”

պայմանագրերը կարող են համապատասխանել աշխատանքների կատարման պայմանագրերի սահմանմանը: Սա կարող է ներառել, օրինակ, այն պայմանագրերը, որոնք ընդգրկում են ծրագրի պլանավորումը և ֆինանսավորումը, ինչպես նաև դրա իրագործումը: Երբ նախագծումն ու շինարարությունը շնորհվում են առանձին, առաջնայնությունը պետք է տրվի նախագծման աշխատանքներին, կամ որպես այլընտրանք, այն կարող է շնորհվել նախագծման մրցույթի միջոցով:

Սահմանման երկրորդ մասի համար “աշխատանքը” կառուցման կամ շինարարական աշխատանքների արդյունք է, որոնք դիտարկվում են ամբողջության մեջ և բավական են տնտեսական և տեխնիկական գործառույթների իրականացման համար: Այս սահմանումը կարևոր է մի քանի պատճառներով, մասնավորապես ցանկացած ձևով աշխատանքների իրականացման համատեքստում և շեմի արժեքը գնահատելու նպատակով, և որպես հետևանք, այն ժամանակ, երբ որոշվում է, թե արդյոք աշխատանքների կատարման մեկ հայտը պետք է բաժանվի՝ պայմանագիրը համապատասխան շեմի արժեքից ցածր դարձնելու նպատակով:

### **Որո՞նք են ապրանքների մատակարարման պայմանագրերը:**

Ապրանքների մատակարարման սահմանումն ավելի պարզ է, քան աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերինը: “Հանրային ոլորտում մատակարարման պայմանագրերը” սահմանվում են որպես պայմանագրեր, բացառությամբ աշխատանքների կատարման պայմանագրերի, որոնք ներառում են արտադրանքի գնումը, վարձակալությունը կամ հետագայում այդ արտադրանքի գնման հնարավորությամբ, կամ առանց դրա: Ի հավելումն, նման արտադրանքի մատակարարումը կարող է ներառել տեղակայման և տեղադրման գործառնություններ:

Հրահանգում նախատեսված արտադրանքի ցանկը կարելի է գտնել տարբեր ցուցակներում, որոնք օգտագործվում են գովազդի նպատակով՝ արտադրանքը նկարագրելու համար: Տե՛ս, օրինակ, Գնումների Ընդհանուր Բառարանը (ԳԸԲ):

### **Որո՞նք են ծառայությունների մատուցման պայմանագրերը:**

“Ծառայությունների մատուցման պայմանագրեր” հասկացությունը, ըստ էության, վերաբերում է աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերից բացի՝ այլ պայմանագրերի, որոնց նպատակն է ծառայությունների մատուցումը, ինչպես նախատեսված է Հանրային Ոլորտի Հրահանգի Հավելված II-ում (Կոմունալ Ծառայությունների Մատուցման Հրահանգի XVII Հավելված): Մի շարք ծառայություններ հստակորեն բացառված են, մասնավորապես այն պատճառով, որ նրանք չեն կարող գնվել Հրահանգում նախատեսված դրույթների միջոցով:

### **Ծառայությունների մատուցման պայմանագրեր. երկաստիճան մոտեցում**

Հրահանգները տարբերակում են մտցնում առաջնային և ոչ առաջնային ծառայությունների միջև: Այս տարբերակումն արված է ոչ թե հատուկ գործունեության բնույթի հիման վրա, այլ այն հնարավորության, որը գոյություն ունի

համապատասխան ծառայությունների մատուցման համար ազգային սահմաններից դուրս և այս ծառայությունների հստակ բովանդակության վրա՝ ազդելու անդամ երկրների միջև առևտրի վրա:

Այս տարբերակումը հատկապես ակնհայտ է դառնում, երբ այն ծառայությունները, որոնք թվարկված են Հավելված IIԲ-ում որպես ոչ առաջնային, չնայած կարող են ընդգրկել տեղայնացված մրցակցություն, ավելի քիչ են ենթակա միջազգային մրցույթների կա՛մ ծառայությունների բնույթի պատճառով (օրինակ, իրավաբանական կամ վարչական ծառայություններ, որոնք հիմնված են ազգային օրենքների և իրավական համակարգի իմացության վրա), կա՛մ այն տեղանքի պատճառով, որտեղ դրանք պետք է մատուցվեն (օրինակ, հյուրանոցային կամ ռեստորանային ծառայություններ):

Սա չի նշանակում, որ նման պայմանագրերի համար մրցակցությունն անհնար է որոշակի տեղական կամ ազգային մակարդակում կամ նույնիսկ, որ միջազգային մակարդակում մրցակցությունը դրանց համար անհասանելի է, այլ ուղղակի այդ ծառայությունների բնույթը և դրանց արժեքն այնպիսինն է, որ դա քիչ հավանական է:

Տասնվեց առաջնային ծառայությունները, որոնք թվարկված են Հանրային Ոլորտի Հրահանգի Հավելված III-ում, ենթակա են շնորհման մասնաբաժանմանը և ընթացակարգի և Հրահանգների այլ դրույթների:

Ոչ առաջնային ծառայությունները ենթակա են միայն հիմնական թափանցիկության ռեժիմին, որը պահանջում է Հրահանգի այն դրույթների պահպանում, որոնք վերաբերում են տեխնիկական մասնագրերի ոչ խտրական լինելուն և շնորհման արդյունքների հրապարակման պարտականությանը:

### **Ինչպե՞ս է դասակարգվում պայմանագիրը, երբ այն ներառում է տարբեր տարրերի խառնուրդ:**

Պայմանագրերը պետք է դասակարգվեն որպես աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման կամ ապրանքների մատակարարման պայմանագրերի, քանի որ դրանց նկատմամբ կիրառվում են Հրահանգի տարբեր դրույթներ: Խնդիրներ կարող են առաջանալ այն պայմանագրերի ճիշտ դասակարգման դեպքում, երբ պայմանագիրը աշխատանքների կատարման և/կամ ապրանքների մատակարարման և/կամ ծառայությունների մատուցման համակցություն է պարունակում: Հրահանգները պարունակում են դրույթներ, թե ինչպես պետք է վարվել այս դեպքում, օրինակ.

**Առաջնային և ոչ առաջնային ծառայությունների մատուցման պայմանագրերի խառնուրդ-արժեքի թեստ.** Հրահանգները կիրառում են հստակ արժեքի թեստը ծառայությունների մատուցման այն պայմանագրերի նկատմամբ, որոնք պարունակում են ն՛ առաջնային, և՛ ոչ առաջնային ծառայությունների մատուցում: Պայմանագրերը կլինեն առաջնային ծառայությունների մատուցման համար, եթե դրանց արժեքն ավելի մեծ է, քան ոչ առաջնային ծառայությունների մատուցման արժեքը: Պայմանագրերը կլինեն ոչ առաջնային ծառայությունների մատուցման համար, երբ պայմանագրում պարունակվող այդ ծառայությունների մատուցման արժեքն ավելի մեծ է, քան առաջնային ծառայությունների մատուցման արժեքը:

**Ապրանքների մատակարարում/ծառայությունների մատուցում-արժեքի թեստ.** Ըստ էության այն պայմանագրերը, որոնք պարունակում են ն' ապրանքների մատակարարման, ն' ծառայությունների մատուցման տարրեր, կլինեն կա'մ ապրանքների մատակարարման, կա'մ ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ կախված յուրաքանչյուր տարրի ներկայացրած արժեքից:

Պայմանագիրը կհամարվի ծառայությունների մատուցման պայմանագիր, երբ մատուցված ծառայությունների արժեքը գերազանցում է մատակարարված ապրանքների արժեքը: Երբ արժեքը հավասար է, այն կհամարվի ապրանքների մատակարարման պայմանագիր: Սահմանումը տարբերակում չի մտցնում առաջնային և ոչ առաջնային ծառայությունների մատուցման միջև, այն իմաստով, որ եթե ոչ առաջնային ծառայությունների մատուցման արժեքը խառը պայմանագրում ավելի մեծ է, քան ապրանքների մատակարարման արժեքը, ամբողջ պայմանագիրը կհամարվի ոչ առաջնային ծառայությունների մատուցման պայմանագիր:

**Աշխատանքների կատարում/ծառայությունների մատուցում-գլխավոր նպատակի թեստ.** Աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դեպքում Հրահանգը չի նախատեսում արժեքի թեստ, այլ ներառում է թեստ՝ հիմնված պայմանագրի գլխավոր նպատակի վրա:

**Ապրանքների մատակարարում/աշխատանքների կատարում.** Հրահանգների համաձայն ապրանքների մատակարարման պայմանագրերը, որոնք որպես երկրորդային հարց ընդգրկում են նաև տեղակայման և տեղադրման գործառնությունները, սահմանվում են որպես մատակարարման պայմանագրեր: Օրինակ, վերամբարձ կռունկի գնման դեպքում այն նաև պետք է տեղադրվի նավաշինարարության տարածքում, պայմանագրի նպատակը վերամբարձ կռունկի մատակարարումն է և ոչ թե այն տեղակայելու ծառայության մատուցումը, եթե նույնիսկ այս ծառայությունները զգալի են:

Այս “գլխավոր նպատակի” թեստը, որն արտացոլում է, թե ինչպես պետք է տարբերակվեն ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը, ամենայն հավանականությամբ կկիրառվի նույնիսկ այն դեպքում, եթե տեղակայման կամ տեղադրման ծառայությունների արժեքը ավելի մեծ է, քան հենց մատակարարման արժեքը, քանի որ սա պայմանագրի նպատակի, այլ ոչ թե արժեքի վրա հիմնված թեստ է, որը կիրառվում է՝ տարբերակելու ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը:

### **Կա'ն արդյոք պայմանագրի այլ տեսակներ, որոնք ենթակա են Հրահանգին:**

Այո, Հրահանգը կիրառվում է մի քանի այլ տեսակի պայմանագրերի նկատմամբ, որոնց համար կիրառվում են շնորհման հատուկ ընթացակարգեր: Սա ներառում է սուբսիդավորված աշխատանքների կամ սուբսիդավորված ծառայությունների մատուցման պայմանագրերը, բնակարանաշինության սուբսիդավորված ծրագրերի և աշխատանքների կոնցեսիայի պայմանագրերը:

## Հաճախ տրվող հարց 1.

**Ի՞նչ է ՊՄԳ պայմանագիրը:** ՊՄԳ հապավումը վերաբերում է “պետական-մասնավոր գործընկերությանը”: ՊՄԳ-ի մեկ կամ պարզ սահմանում չկա, քանի որ այս հասկացությունն ընդգրկում է պայմանագրերի մի շարք տարբեր տեսակներ և մատակարարման այլ մոդելներ: ՊՄԳ-ն հիմնականում ներառում է պայմանավորվածություն, որի շրջանակում պետական պատվիրատուն (հանրային ոլորտը) համաձայնագրի մեջ է մտնում մասնավոր ոլորտի կազմակերպությունների հետ՝ ենթակառուցվածքների կամ հանրային ծառայությունների մատուցման համար: Կառուցվածքը կարող է լինել պայմանագրային կամ ինստիտուցիոնալ, վերջինս ներառում է համատեղ կազմակերպության կամ այլ համատեղ ձեռնարկության հիմնում, որտեղ և՛ պետական պատվիրատուն, և՛ մասնավոր ոլորտի կողմը համակագործակցում են ենթակառուցվածքի կամ ծառայությունների մատուցման համար:

ՊՄԳ-ների հիմնական հատկանիշը ռիսկի կիսումը կամ փոխանցումն է մասնավոր հատվածի գործընկերոջը և ՊՄԳ-ները հաճախ, բայց ոչ միշտ երկարատև են: ՊՄԳ-ների վճարման և ֆինանսավորման մեթոդները տարբեր են: Վճարումները կարող են լինել պետական պատվիրատուի կողմից, կամ կարող են ստացվել երրորդ անձանցից, ինչպիսիք են հարմարությունները օգտագործողները, կամ կարող են լինել աղբյուրների համակցությունից: Ֆինանսավորումը կարող է լինել պետական պատվիրատուից, մասնավոր հատվածի գործընկերոջից, արտաքին հովանավորողներից, ինչպիսիք են բանկերը, կամ աղբյուրների համակցությունից:

ՊՄԳ պայմանագրերից շատերի նկատմամբ ամբողջությամբ կկիրառվեն Հրահանգները: Տե՛ս Հաճախ տրվող Հարց 2՝ կոնցեսիայի պայմանագրերի վերաբերյալ մեկնաբանությունների համար:

## Հաճախ տրվող հարց 2.

**Ի՞նչ է կոնցեսիան և արդյոք այն ընդգրկված է Հրահանգներում:** Կոնցեսիան Հրահանգներում սահմանված պայմանագրերի նման պայմանագիր է՝ բացառությամբ, որ իրականացվելիք աշխատանքների կամ մատուցվելիք ծառայությունների համար փոխհատուցումը, օրինակ, բաղկացած է կա՛մ բացառապես աշխատանքները կամ ծառայությունները շահագործելու իրավունքից, կա՛մ այս իրավունքից՝ վճարի հետ միասին:

Կոնցեսիոները հաճախ ստանձնում է հանրային ծառայությունների մատուցման գործառնական և ֆինանսական ռիսկը ամենալայն առումով՝ ի հատուցումն “ծառայության” շահագործումից շահույթ ստանալու հնարավորության: Կոնցեսիաները երբեմն կարող են դասակարգվել որպես ՊՄԳ-ի տարատեսակ:

Կոնցեսիաներն օգտագործվում են, օրինակ, մեծ ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար, հիմնականում կապված ճանապարհային ցանցի, կամուրջների կամ թունելների կառուցման հետ, որտեղ կոնցեսիոներին հատուցում են օգտագործողներից գանձված վճարների միջոցով: Այդուհանդերձ, դրանք պարզապես օգտագործվում են նաև կոնցեսիոների կողմից հարմարությունների գործառնության ապահովման և պահպանության իրականացման համար (ոչ թե կառուցման), ինչպես օրինակ, երբ օպերատորին տրվում է գոյություն ունեցող երկաթգծի կամ մետրոյի ենթակառուցվածքի գործարկման կոնցեսիան: Կոնցեսիայի առաջին տեսակը աշխատանքների կատարման կոնցեսիայի օրինակ է, իսկ երկրորդը՝ ծառայությունների մատուցման կոնցեսիայի:

Միայն հանրային աշխատանքների կոնցեսիաներն են ամբողջապես ընդգրկված Հանրային Ոլորտի Հրահանգում:

Հանրային Ոլորտի Հրահանգն իր կարգավորման դաշտից հստկորեն բացառում է ծառայությունների մատուցման կոնցեսիան: Այնուամենայնիվ, Պայմանագրի ընդհանուր սկզբունքները շարունակում են կիրառվել:

## Բացառություններ

Նույնիսկ եթե պայմանագիրը համապատասխանում է պետական պատվերի պայմանագրի հասկացությանը, որոշ այսպիսի պայմանագրեր կարող են բացառվել Հրահանգի շրջանակից մի շարք պատճառներով: Որոշները բացառված են, որովհետև նրանք իրենց բնույթով հակված չեն մրցակցության: Որոշ բացառություններ կարող են կիրառվել միայն հատուկ տեսակի պայմանագրերի նկատմամբ: Որոշները բացառված են, որովհետև կառավարությունը ցանկանում է բացառել դրանք մրցակցությունից հատուկ պատճառով: Կա նաև “պահեստային” պայմանագրերի դասակարգ, որոնք, չնայած բացառված չեն, օգտվում են նախապատվություն տվող իրավունքից:



Ի հավելումն, Հանրային Ոլորտի Հրահանգը իր կարգավորման դաշտից նախատեսում է բացառում պետական պատվերի այն պայմանագրերի համար, որոնք այլ կերպ ընդգրկված են Կոմունալ Ծառայությունների Մատուցման Հրահանգում կամ պետական պատվերի այն պայմանագրերի համար, որոնք չնայած ընդգրկված են Կոմունալ Ծառայությունների Մատուցման Հրահանգում, սկզբունքորեն բացառված են այդ Հրահանգի դրույթների ազդեցությունից:

## Բացառություններ՝ պայմանագրի բնույթից ելնելով

**Հողի ձեռքբերման պայմանագրեր.** Հրահանգը իր կարգավորման դաշտից բացառում է ցանկացած ֆինանսական միջոցներով հողի, գոյություն ունեցող շինությունների կամ այլ անշարժ գույքի ձեռքբերման կամ վարձակալության կամ դրանց նկատմամբ իրավունքների ձեռքբերման պայմանագրերը: Այս պայմանագրերը բացառված են, քանի որ նրանք կապված են անշարժ գույքի հետ, ինչը, բնական է, կախված է աշխարհագրական տեղանքից: Նման պայմանագրերը, ըստ էության, կնքվում են տեղական շուկաներում և նրանց նպատակը հիմնականում ցանկացած միջաահմանային մրցակցության հավանականության բացառումն է:

Կարևոր է նշել, որ զարգացման համաձայնագրերը և սեփականության հետ կապված այլ տեսակի գործարքներն անհրաժեշտաբար չեն համապատասխանում այս բացառմանը, ավելի հաճախ այն պատճառով, որ աշխատանքների կատարման պայմանագիրը շնորհվում է որպես ընդհանուր համաձայնագրի մաս:

**Հատկապես Ծառայություններին վերաբերող բացառություններ.** Այս բացառությունները կիրառվում են հատուկ հանգամանքներում՝ հիմնվելով կա՛մ որոշակի ծառայություններ մատուցելու համար որոշակի մարմինների բացառիկ իրավունքների շնորհման, կա՛մ որոշակի հատուկ ծառայությունների բնույթի վրա:

- Ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ բացառիկ իրավունքների հիման վրա
- Հեռահաղորդակցման նյութերի և ժամանակի
- Արբիտրաժային և հաշտարարի ծառայություններ
- Որոշակի ֆինանսական ծառայություններ
- Աշխատանքային պայմանագրերը
- Հետազոտությունների և զարգացման որոշ պայմանագրեր

## Բացառություններ ընտրությամբ

Այս բացառությունները վերաբերում են ռազմական բնույթի գնումներին, գաղտնիություն պահանջող գնումներին և այն գնումներին, որոնք համաձայնության հետևանքով կարգավորվում են գնումների կատարման այլ կանոններով: Բոլոր երեք տեսակի բացառությունները վերաբերում են Հանրային Ոլորտի Հրահանգին:

**Ռազմական ոլորտի գնումների** որոշակի պայմանագրերի համար, որոնք շնորհվում են ռազմական և անվտանգության ոլորտում և ընդգրկված չեն Ռազմական ոլորտի 2009/81 Հրահանգում, էթե անհրաժեշտ է պաշտպանել անվտանգության էական շահերը

**Գաղտնիության պահպանման պահանջով պայմանագրեր.** Հրահանգները չեն կիրառվում պետական պատվերի այն պայմանագրերի նկատմամբ (i) որոնք համարվում են գաղտնիք կամ (ii) որի իրականացումը պետք է ուղեկցվի հատուկ անվտանգության միջոցառումներով՝ սովյալ անդամ երկրում գործող օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների համաձայն կամ (iii) երբ այդ երկրի անվտանգության էական շահերի պաշտպանությունն այդպես է պահանջում:

**Այլ նորմերով կարգավորվող պայմանագրեր.** Հրահանգները չեն կիրառվում այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կարգավորվում են տարբեր ընթացակարգային նորմերով և շնորհվում են.

- ԵՏՀ Պայմանագրի համաձայն կնքված միջազգային համաձայնագրերի համապատասխան անդամ երկրների և մեկ կամ մի քանի երրորդ երկրների միջև և ընդգրկում են աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում կամ ծառայությունների մատուցում՝ պայմանադիր երկրների կողմից ծրագրի համատեղ իրականացման կամ շահագործման համար,
- Անդամ երկրի կամ երրորդ երկրի կազմակերպություններին՝ համաձայն գորքերի տեղակայմանը վերաբերող միջազգային համաձայնագրերի,
- միջազգային կազմակերպությունների հատուկ ընթացակարգերի համաձայն, ինչպիսիք են օրինակ, ՄԱԿ-ը, Զարգացման և Վերակառուցման Եվրոպական բանկը կամ Համաշխարհային բանկը:

## Պահուստային պայմանագրեր

Հրահանգը ներկայացնում է “պահուստային” պայմանագրերի նոր դասակարգ, որոնք բացառված չեն Հրահանգի իրավակիրառ շրջանակից, բայց ենթակա են համապատասխանության հատուկ պայմանների, որոնք պարտադրվում են մասնակիցներին:

ԵՄ անդամ երկրները կարող են իրավունք վերապահել մասնակցել պետական պատվերի պայմանագրերի շնորհման ընթացակարգերին, որոնք վերաբերում են հաշմանդամ անձանց աշխատանքի վայր հանդիսացող կազմակերպություններին կամ կարող են միջոցներ ձեռնարկել, որպեսզի այսպիսի պայմանագրերն իրականացվեն հաշմանդամների աշխատանքային ծրագրերի համատեքստում, որտեղ աշխատակիցների մեծ մասը ֆիզիկական արատներ ունեցող անձիք են, որոնք իրենց հաշմանդամության բնույթի կամ լրջության պատճառով չեն կարող գործունեություն իրականացնել բնական պայմաններում:

### Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններ

Կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտին հատուկ բացառություններ

.Կոմունալ Ծառայությունների Մատուցման Հրահանգը նախատեսում է

ուրտին հատուկ բացառություններ կոմունալ ծառայությունների մի շարք ուրտներում՝ հիմնականում հիմնված այս շուկաներում մրցակցության աստիճանի վրա: Այս բացառությունների օրինակներն ընդգրկում են էներգիայի արտադրման համար վառելիքի գնման պայմանագրերը, ջրի գնումը, ավտոբուսային փոխադրման ծառայությունները և նավթի և գազի հետազոտումը և շահագործումը: Կոմունալ Ծառայությունների Մատուցման Հրահանգը նաև ներկայացրել է նոր ընդհանուր բացառությունների մեխանիզմ՝ գործունեության տեսակների համար, որոնք ենթարկվում են մրցակցության այն շուկաներում, որտեղ մուտքն արգելված չէ:

Կոմունալ Ծառայությունների Հրահանգը պարունակում է նաև մի շարք այլ բացառություններ, որոնք հատուկ են կոմունալ ծառայությունների ուրտին, ներառյալ.

- **Համայնքից դուրս գործունեության տեսակները.** Հրահանգը չի կիրառվում այն պայմանագրերի նկատմամբ, որոնք շնորհվում են պետական պատվիրատուի կողմից՝ իրենց հետապնդած համապատասխան գործունեության տեսակից տարբեր նպատակների համար, կամ երրորդ երկրում այդպիսի գործողությունների հետապնդման համար, այնպիսի պայմաններում, որոնք չեն ներառում ցանցի կամ աշխարհագրական տեղանքի ֆիզիկական օգտագործումը Համայնքի ներսում:
- **Դուստր կազմակերպությունների բացառությունը.** Եթե “կազմակերպությունը” կազմված է մի շարք ընկերություններից, որոնք փոխադարձաբար տնօրինում են միմյանց կամ փոխադարձ կախվածություն ունեն, Կոմունալ Ծառայությունների Հրահանգը նախատեսում է հատուկ բացառություն որոշակի պայմանների ներքո այս կազմակերպությունների միջև գնումների իրականացման համար: Այս գնումները համարվում են “ներքին” պայմանագրեր, որոնք հայտնի են որպես միջխմբային գործարքներ: Որոշակի պայմաններ բավարարելու պայմանով բացառված պայմանագրերը նրանք են, որոնք շնորհվել են դուստր կազմակերպություններին և որոնց հիմնական նպատակը ավելի շուտ որպես իրենց խմբի կենտրոնական ծառայություններ մատուցող հանդես գալն է, քան բաց շուկայում իրենց ծառայությունները վաճառելը:
- **Գնումներ վերավաճառքի կամ վարձակալության համար.** Հրահանգն իր կարգավորման դաշտից բացառում է ցանկացած պայմանագիր, որը շնորհվել է՝ երրորդ անձանց վերավաճառելու կամ վարձակալության հանձնելու համար: Այս բացառումը նպատակ ունի ներառել ապրանքների համար կնքված պայմանագրերը, երբ պետական պատվիրատուն նպատակ ունի վաճառել կամ վարձակալության հանձնել մրցակցային շուկայում գնված սարքավորումները: Այս պայմանագրերը կբացառվեն միայն, եթե պետական պատվիրատուն չունի նման պայմանագրի առարկան վաճառելու կամ վարձակալության հանձնելու հատուկ կամ բացառիկ իրավունք, և եթե այլ կազմակերպություններն ազատ են վաճառելու կամ վարձակալության հանձնելու միևնույն ապրանքները միևնույն պայմաններով, ինչպես պետական պատվիրատուն:

---

Հետագա ընթացակարգներ.

[SIGMA Public Procurement Training Manual](#)